ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՒԸ ԱՌ 1-Ն ՅՈՒՆՈՒԱՐԻ 1903 Թ.

Պոլսի հայոց Պատրիարքարանը իւրաքանչիւր տարի լոյս է ընծայում մի «Վիճակագրոյց», որի մէջ մանրամասն տեղեկութիւններ են զետեղուած լինում Թիւրքիայի հայոց վարժարանների մասին։ Աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին ծանօթացընել այդ «Վիճակագրոյցի» ընդհանուր թիւերի հետ։

Պոլսում վարժարանների թիւը առ 1 յունուարի 1903 թ. հասնում է 40։ Այդ վարժարաններում սովորում են 3060 մանչ, 2350 աղջիկ։ Երկսեռ աշակերտներից 1777 ձրիավարժ են։ Ուսուցիչների թիւն է 194, վարժուհիներինը՝ 111։ Այդ բոլոր դպրոցների ամսական ծախքն է 82,865 ղուրուշ։

Այս վիճակագրոյցից դուրս են մնում Պոլսի պետական և զանազան հայ ու օտար վարժարաններ յաճախողները, որոնց թիւն է 1823, հետեւեալ ստորաբաժանմամբ.

1) Պետական վարժարաններ յաճախող		215	մանչ	
2) Մասնաւոր հայ »	»	420	»	160 աղջ.
3) Հայ հռոմ. և հայ բող.	»	280	»	195 »
4) Օտար »	»	188	»	280 »

Հետաքրքրական թիւեր են տրւում և դաւառների դպրոցների մասին՝ բաժանուած ըստ առաջնորդական վիճակների։

Մենք այդ առաջնորդութիւնները կը բաժանենք աւելի մեծ աշխարհագրական սահմաններով. Փոքր-Ասիա, Թիւրքաց Հայաստան և Գաղութներ։

Փոքր-Ասիայում (Բանարմայի, Սեբաստիայի, Եւդոկիայի, Գասթեմոնիայի, Գոնիայի առաջնորդութիւններ) հայոց վարժարանների թիւն է 89, երկսեռ աշակերտների՝ 10,719, ուսու-

ցիչների և վարժուհիների՝ 230, ամսական ծախք՝ 36,478 ղուրուշ։

Թիւրքաց Հայաստանում (Բաղէշի, Երզնկայի, Կամախի, Բայազէտի, Մշոյ, Վանայ, Սղթամարայ, Կարնոյ, Տիգրանակերտի և Բալուի առաջնորդութիւններ) կան 172 վարժարաններ, 9,975 երկսեռ աշակ., 284 ուսուցիչներ (երկս.), ծախք 31,430 ղուրուշ ամսական։

Մնում է յիշատակել և Կիլիկիայի կաթողիկոսական թեմը, որի մասին տեղեկութիւն տուել ենք անցեալ համարի Արտ. Տես. մէջ։

Տեղեկութիւններ են բերուած նաև հետևեալ գաղութների մասին.

Եգիպտոսում կայ 2 վարժարան, 440 երկս. աշակ., 23 ուսուցանող (երկս.), ծախք ամսական 14,921 ղ.։

Կիպրոս 3 վարժարան, 100 աշակերտ (երկս.) ծախք 5,304 ղ.։

Բուլգարիա 10 վարժ., 947 աշ., 33 ուսուց., ամսական ծախք 12,723։

Թուերը պերճախօս կերպով ցոյց են տալիս, որ թէև Թիւրքիայում ամեն տեղ ցիր ու ցան կան հայոց ազգային վարժարաններ, սակայն դրանց թիւը և դրանց պահպանութեան համար ունեցած միջոցները շատ խղճուկ են։

S.